

կը ցանկար մի որ եւ է բանի ինքնատուր լինելու եւ քննարկում եւ, որ ինքնից ուղղակի փախչում են ինչպէս ժամանակագրութիւնը, հարաբերականութիւնը, ուղղակի ճակատաբար կը գրեմ, որ էլ փող չեմ հաւաքում, որպէս զի մարդիկ ինչպէս չեն փախչում:

Երեւակայեցէ մի րօպէ, որքան դուր ճշմարտութիւն այդ խոստովանութեան մէջ:

Երբ երկու երեք ամիս առաջ մեր գրադարանի ղեկավարն պնդեցինք, որ խոշոր տառերով գրած «Երկրաչափութիւն» վրաստիպ չէր լինել, որովհետեւ այստեղ ընդունաւ մի փող եւ այն մակագրելու, եւ հեղինակը ժպտում էր ծառերին եւ իրանց օգնութիւնը բերելու, թէկուզ նոյն իսկ իրանց շահախնդրութիւնը:

Եւ այդպէս, առանց գրեման ոչինչ գրելու չէր գալիս, իսկ գրելու համար հարկաւոր է շան երես, յամառութիւն, ինքնազգացումն ու այլն:

Ինձ շատ անգամ է՝ պատահել մի որ եւ է կողմից պատահական զիջում ըստ ընդունված թէ՛ օրինակ թէ՛, երբայր, չէ որ այդ անկողնու պարտքն է, զէ եթէ դու չես անում, գոնէ չնորակալ եղիր, որ մէկ ուրիշը քո պարտքը կատարում է... Դէ զանա մի տա՛նիր, մա, լինում է նրա պատասխանը եւ ոչ խոփէ է չարտում մի 2 րոպէ:

Շատ քիչ անգամ ինձ պատահել է լսել մէկից չնորակալութիւն, որ իրան պատիւ եմ անում, դիմելով նրա օգնութեան:

Սրանք այն բացառիկ միջնորդական երեւոյթներն են, որոնք տակաւին քաջաբերում են մարդու եւ մարդ դեռ չարունակում է չը յուսահատվել:

Սակայն շատ է այդպիսիների թիւը: Ի հարկէ ոչ:

Մեծամասնութիւնը տալիս է շատ գծաւորութեամբ. կան այնպիսի հարուստներ, որոնց ճակատին ուղղակի կարծես գրած լինի, մի համարձակվիր մօտենալ, կօպէլ չես ստանալ:

Ոմանք էլ, չը գիտեն ինչու, ասում են շատ չնորակալ են, առ էլ հրաժարվելու ուրիշ քաղաքապարական ձեւ է:

Հնդկանրապէս պէտք է ասեմ, որ տակաւին մենք բարեգործական հրաւերներին վառ սրտով արձագանք տալու արժանաւորութիւնից շատ գուրկ ենք:

Լինում են, ի հարկէ, եւ համեստօրէն ժպտալ երեսներին գրողներ, լինում են եւ իրանց քիչ տալը կեղծ անուան տակ ծածկողներ:

Պատահել է եւ տեսնել, թէ ինչպէս խուլ անկրթներում զանազան բախտախնդիրներ կարողացել են ապահովել իրանց:

Այսպէս, յաճախակի պատահել եմ 4—5 երեւոյթներ, որոնք ամառային մի յայտնի գուլմարով պահանջել են մի ուսանողի նիւթակա՛նը, գտնելով նրա մէջ կամ «ապագայ գրողի» կամ «ապագայ երաժշտի» կամ «ապագայ երգչի» ինչ որ տաղանդ եւ համար. Ահա այստեղ նկատվում է հասարակական օժանդակութեան անսխալութիւնը:

Քանի քանի անգամ ենք հիասթափվել եւ դեռ ինչքան պիտի հիասթափվենք. Ո՛ր են

այդ անհամար «ապագայ տաղանդները». մենք գոնէ մէկին էլ չը տեսնեմք մեր յայտնի արդարացրած. Վերադարձանք օժիտ փնտռողների թեկնածուներ են դառել, իսկ չը վերադարձանքների վրա մենք վաղուց պիտի մի մեծ խաչ դնէինք:

Ես դառնում եմ իմ առաջվայ խօսքերին. մենք ունենք արդէն յայտնի, հայ հասարակութեան ծանօթ մի շարք գրողներ, որոնք արդարեւ կարօտ են նիւթակա՛նի. ինչ անսխալութիւն է ստիպում մեզ անուան անել դրանց եւ «ապագայ տաղանդներին» ետեւից ընկնել. Դառն փորձը ցոյց տուց, որ տաղանդը կորչել չէ կարող, որ բարձր ուսումը անվիճելի մի պայման չէ տաղանդի համար:

Ես հրաւիրում եմ հայ հասարակութիւններին մի կողմ թողնել այդ ծուռ հասկացած միտքը, հրաւիրում եմ օգնել ամենից առաջ մեր գրողութիւն ունեցող ոյժերին, ըստ արժանւոյն գնահատել մեր գործիչներին:

Ես հրաւիրում եմ հայ հասարակութիւններին մի պարզ սրտով, մի ժպտուն դէմքով արձագանք տալ իրանց դիմող այն պարտքների կոչին, որոնց վիճակած է բարի նպատակի համար դիմել ժողովարարութեան անչնորհակալ միջոցին:

Չէ որ դրանք մեր պարտքն են կատարում, մեր բեռը թեթեւացնում:

Այ. Արեւիկան

Բագու

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Յուշիսի 8-ին

Երկու տարի է չարունակ, որ վաղարշապատցի, ինչպէս եւ Երեւանեան նահանգի շատ գիւղացիներ ենթարկվում են ընտելեան հարուածներին եւ վնասվում զանազան պատահանքներից: Եթէ մինչեւ այժմ մեր գիւղացիներ կարողացել է առանց դուր օգնութեան պահպանել իր գոյութիւնը, այդ միայն չնորհիւ անհամարանքի, որ եթէ երկրի բերքերի տեսակներից մէկն ու մէկը վնասվել է որ եւ է պատահաբար, միւս տեսակները, մնալով անվնաս, կարողացել են օգնել գիւղացուն:

Այսպէս, անցնալ տարի Վաղարշապատում եւ չորսերկու գիւղերում վնասվեցին ցորենները արտաքին ու այգիները, մինչդեռ բամբակն ու երկրի միւս բերքերը մնացին անվնաս: Իսկ այս տարի առ այժմ վնասված են միմիայն այգիները, այն էլ հազիւ միայն կիսով չափ: Համեմատաբար այս տարվայ վնասը աւելի պակաս պէտք է համարել, քան թէ անցնալ տարվանը, մինչդեռ դարձան սկզբից դեռ եւս նկատելի է, որ մեր գիւղացին այս տարի աւելի կարիք ունի եւ աւելի մեծ նեղութեան մէջ է, քան անցնալ տարի: Պատճառը—էջմիածնի վանքի վարիչների մի սխալ կարգադրութիւնն է, որ կարեւոր ենք համարում հրապարակ հանել:

Էջմիածնի վանքը Վաղարշապատում ունի մի հանք, որտեղից կտրվում են կարմիր եւ սեւ

գոյնի սալաքարեր, որոնք գործադրվում են վանքեր, եկեղեցիներ եւ անոն շինելու համար ոչ թէ միայն Վաղարշապատում, այլ մինչեւ անգամ մեծ քանակութեամբ արտահանվում են չրվալ գիւղերը եւ նոյն իսկ Սուրմալուի գաւառը: Սկզբում հանքը ազատ էր եւ այնտեղ բանելու համար ոչ մի վճար չէր պահանջվում, որի փոխարէն քարատները տալիս էին վանքին զանազան տեսակի եւ չափի քարեր ոչ այն արժէքով, որպէս վաճառվում էր գիւղացիների վրա, այլ համեմատաբար բաւական էժան գնով:

Սակայն վերջին տարիներում, երբ քարատները հազար ու մի տեսակ նեղութիւններ կրելով, կարողացան հասնել հանքի այն մասին, ուր գտնվում է ամենաբարձր տեսակի սալաքարը, վանքը սկսեց աճուրդով տալ հանքը եւ ստանալ ամբողջին տարեկան 2—3 հարիւր րոպէ: Այդ դէպքում կապալառուները լինում էին միշտ մի երկու քարահատներ, որոնք եւ թոյլ չէին տալիս միւս մի քանի տասնեակ քարահատների մօտենալ հանքին, մինչեւ չէին ստանում վերջինից կրկնակի արժէքը: Թէ գիւղացիք եւ թէ քարահատներից շատերը շատ անգամ խնդրել են վանքին վերացնելու այս մեծամեծառութիւնը, որի չնորհիւ կապալառուները, իրանց չափը աչքի առաջ ունենալով, իրանց ցանկութեամբ բարձրացնում են թէ քարի արժէքը եւ թէ միւս աշխատող քարահատների վնասը, բայց վանքը չարունակ անուշադիր էր թողնում այս կարեւոր հարցը եւ միայն անցնալ տարի, չնորհիւ մի հեղինակաւոր անձի միջնորդութեամբ, կարելի եղաւ փոխել այս ձեւը եւ թոյլ տալ բոլոր քարահատներին մի որոշ վճարով աշխատել հանքում: Որքան տեղեկացանք, այս ձեւը տուել էր վանքին դուռ վաստակ մօտաւորապէս 300 ր. եւ յոյս կար, որ այս ձեւով էլ կը շարունակէ վանքը եւ այսուհետեւ, մասնաւոր որ տարեց տարի սալաքարերի պահանջը աւելնալով, պէտք է աւելանային աշխատող քարահատների թիւը, ուրեմն կաւելանար եւ արդիւնքի գումարը:

Բայց վանքը, ի նկատի չառնելով այս համաձայնեցը, այս տարի կապալառու տուեց հանքը բոլորովին մի մասնաւոր անձի տարեկան 400 ր. վճարով:

Քարահատները, ճաշակած լինելով աղայ խօսքէ ինչն էր վարձարը, պայմանաւորվում են միմեանց հետ՝ չաշխատել քարի հանքում, մինչեւ որ վանքը չը ոչնչացնի աճուրդը եւ անցնալ տարվայ ձեւով թոյլ չը տալ նրանց հանքում աշխատելու:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, հարցը շատ հասարակ եւ չնչին հարց է, բայց հենց այս չնչին հարցն է գլխաւոր պատճառը, որ մեր ժողովուրդը այսօր դրամի կարիք է զգում եւ չը գիտէ թէ՛ վաղը ինչպէս պէտք է քաղէ իր արտը, կալսէ իր ցորենը եւ վճարէ վանքի ու գիւղի հարկերը, որովհետեւ այս չնչին հարցը չէ վերաբերում միայն քարահատներին, որոնք այսօր անգործ թափառում են գիւղի փողոցներում, մինչդեռ սրանք ամենաաշխատասէր

գաւաղացի են կտրվում մեղանում եւ աւելի մեծ տանջանքներով եւ դժուարութեամբ են կարողանում ձեռք բերել իրանց օրեկան վաստակը, այլ սրանց հետ միասին վնասվեցին եւ հարկերից աւելի սալաքանները, որոնք դաշտային աշխատանքներից ազատ ժամանակ սալաքարով քար էին կրում (գիւղից հանքը կը լինէ 5—6 վերստ): Քար չը լինելու պատճառով կանգնած են տները եւ այլ շէնքերի շինութիւնները, ուրեմն եւ անգործ են հարկաւոր որմնադիրներ ու հիւանդներ, որոնք անգործ մընալ դատապարտել է անգործութեան մի քանի հարիւր չքաւորների եւ բռնաւոր մշակիչի, իսկ այս ամենի անգործութեան պատճառով ընկած է առեւտուրը, ուրեմն եւ վնասվում են հարկաւոր վաճառականներ: Ահա թէ վանքի մի անշնայն կարգադրութիւնը ինչ հետեւանք է ունեցել Վաղարշապատի բնակիչների վերաբերմամբ եւ որքան վնասներ է պատճառել սրանց... Եւ այս բոլորը իբր թէ վանքի շահը պաշտպանելու նպատակով եւ 100 ր. աւելի կապալառին օտանալու ցանկութեամբ:

Այժմ տեսնե՛ք, թէ ինչ վնաս կուենայ վանքը իր այս կարգադրութեամբ. եթէ բոլոր վնասվածների թիւը հաշուելու լինենք 400 անձ եւ ընդունենք, որ սրանց կէս մասը թէ կարողանայ գրամ ճարել՝ իր արտը հնձելու, ցորենի հասկերը կրելու, կալսելու եւ հարկերը վճարելու, այնուամենայնիւ մնացած կէս մասը, չը կարողանալով նոյն իսկ գրամ ճարել, չի կարողանալ վճարել վանքի հարկը, որ հաւասար կը լինի 850 ր., չի կարողանալ իր արտը ծամանակին հնձել, ծամանակին կրել կալը եւ ծամանակին կալսել նրան, իսկ այս բոլորը ծամանակին չը կատարելով, թէ գիւղացին եւ թէ վանքը մօտաւորապէս կիսով չափ վնասվում են... ահա թէ 100 ր. աւելի վաստակ ստանալու ցանկութեամբ, որքան վնաս կը ստանայ վանքը նոյն տարվայ ընթացքում: Իսկ եթէ հանքի կապալառու թու՛ն ինչ երեք տարով, ինչպէս հաւատարմութեան չափով, այն ծամանակ հաստատապէս կարելի է ասել, որ երեք տարվայ ընթացքում, եթէ հանքի գործը այսպէս շարունակվի, Վաղարշապատում երկու հարիւր չափ տներ բոլորովին կը սնանկանան, անկտրող կը լինեն վճարել հարկերը, ուրեմն եւ վանքը ընդ միշտ կը զրկվի 850 ր. տարեկան արդիւնքից:

Թող վանական գործիչները ուշադրութեան արժեն այս հանգամանքը եւ աշխատեն օր առաջ ուղղել իրանց սխալը եւ ազատել իր ժողովրդին սպասող վտանգից:

Արիստ

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Շուշի, յուշիսի 6-ին

Երկու տարի չարունակ Շուշու թեմական դպրոցի վարչութեան հասցէին մասնաւորապէս տեսչի վրա սխալ տեղեկութիւններ են երեւում «Մշակի» էջերում, այն էլ ծանր լեզուով ատելութեան զորչումով վարչութիւնս լռել է

նօթագաւ դէրվիշականութեան հետ Կովկասում: Այստեղ Բուխարայից գալիս է սուֆիի Ղազի-Մուհամէդը եւ ընկերակցելով XIX դարի սկզբում յայտնի Ղազի-Մուլլայի հետ, տարածում է դէրվիշականութիւնը լեռնական քիւղերի մէջ եւ սկսում է յայտնի կովկասեան պատերազմը անկախութեան համար: 30-ական թուականների վերջում Ղազի-Մուլլան սպանվեց եւ նրա արժանաւոր ժառանգը դարձաւ հոգակաւոր Շամիլը:

Ղազի-Մուլլան այժմ էլ համարվում է սուբի իբրեւ անհաւատների ձեռքով սպանված: Դէրվիշականութիւնը միտոքալական ձեւ ընդունեց Կովկասում, որովհետեւ լեռնական ցեղերը այնքան էլ պատրաստ չէին ըմբռնելու վարդապետութեան վերացական կողմը, այլ աւելի գործնական ձեւ ընդունելով, արտայայտվեց «միւրիդականութեան» մէջ: Զարմանալի է այն որ որտեղ մի անգամ մտած է եղել որ եւ իցէ դէրվիշ այս կամ այն անուան տակ, այնտեղ ազգայնական, ցեղական զգացմունքը աւելի է յայտնվել, քան թէ ուրիշ տեղերում, ուր ապրել է մահմեդական ժողովուրդը եւ դէրվիշն տեսել: Թուրքեստանում գործել են զլխաւորապէս երեք դէրվիշական աստղեր—Մուհամմէդ Բօգաթգին-Նաքշիւնդին, Խօջա-Արէստը-Մալի-Արարաբ, եւ Ահմադ-Մառանի Թուրքեստանցի: Թուրքեստանում այժմ գործում են զլխաւորապէս երեք դէրվիշական կարգեր՝ Նաքշիւնդի, Քադրիէ եւ Բուրքաւի, որոնց ձեւերը տարածված են բոլոր մահմեդական երկրներում:

(Կը շարունակվի)

*) Позднѣв. Дервиши въ Мусульманскомъ мірѣ. Смирновъ. Дервишизмъ въ Туркестанѣ. Саттар-ханъ. Мусульманскіе Ишаны.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՄԱՆՑ ԳՈՐԾԱԿԱԼ ՊԵՐԻՈԴԻԿ

15 յունիսի

Ս. ՀԵՂԻՆԻ. Երեկ ճանապարհ ընկան Հարա-
ւայրն Աֆրիկա 478 գրքի բաժնիքը

ՊԵՐԻՈԴԻԿ. Փոխարքայ Չեչևան տրեկադրեց
կառավարութեան, որ անդր-ամէրիկական մի-
սիայի շինութիւնը Տիէնկուշատում աւերված է
եւ սպանված է մէկ միսիօնէր. Հրատարակված
է հրովարտակ, որով հրամայվում է զրկել ա-
սիանից տեղական հրամանատարին եւ ոչնչաց-
նել ապստամբներին: Մի քանի պարագլուխ-
ներ, ինչպէս ասում են, զխառնված են «Բէյ-
տէր» գործակալութեան թղթակիցն աւելաց-
նում է, որ ապստամբութիւնը, ըստ երեւոյ-
թիւն, ուղղված է հարկերն աւելելու դէմ՝ պա-
տերազմական տուգանքը վճարելու համար:
Նոյնպիսի անկարգութիւններ տեղի ունեցան
կայսրութեան գանազան մասերում:

Կ. ՊՈԼԻՍ. Պայման է կապված Ակալդոի
նաւաշխարհի հետ Ձեռնարկում՝ զինուորական
ուժ նաւեր կարկառելու մասին:

ԲԵՐԼԻՆ. Դեպքներ Շէգելի եւ Լանցա եւ
կայսերական կանցլէր Բիւլով ստորագրեցին
դաշնագիր՝ դաշնակցութիւնը երկարատեւելու
մասին Աւստրո-Ունգարիայի եւ Իտալիայի հետ:
Երեքսեան զաշնակցութիւնը վերանորոգված
է անփոփոխ ձեւով:

ՎԱՐՇԱՎԱ. Վարչալայի քաղաքային վարչու-
թիւնը միջնորդեց, որ իր գործունէութեան
սահմաններում թոյլատրվի մշտական չափեր
գործարարի ներքին գործերի միջնորդութիւնը
իր համաձայնութիւնը տուեց, միայն այն պայ-
մանով, որ այդ բանը պարտաւորական չը լինի
այն մասնաւոր անձանց համար, որոնք նրա հետ
յարաբերութիւն ունեն:

ԼՕՆԴՕՆ. Առաւօտեան 10 ժամ 40 րոպէին
ընկերութեան «Թագաւորը գիշերը լաւ անցկացրեց»
Բարեւոյթը շարունակվում է: Թագաւորը
այժմ անմիջական վտանգից դուրս է համար-
վում: Ընդհանուր դրութիւնը բաւարար է,
այնուամենայնիւ, վերքը օպերացիայի տեղի
վրա դեռ ուշադրութիւն է պահանջում, եւ
եթէ թագաւորի առողջական դրութեան վերա-
բերմամբ կարելի է դեռ եւս մի քիչ երկիւղ
քաշել, այդ միայն վերքի վերաբերմամբ: Թա-
գաւորի առողջանալը, մինչեւ անգամ ամենա-
նպաստաւոր պայմաններում, ի հարկէ, մի
փոքր ժամանակ կը պահանջէ:

ԲԱՄԲՈ. Ժամանեց բուխարական էմիրը, որը
ուղեւորվում է Պետերբուրգ:

16 յունիսի

ՍՏՕԿԶՈՎ. Միջնորդութիւնը հրաժարական
տուեց: Նոր միջնորդութիւնը յանձնված է
նախկին պրէսիէր Բոստրէմին:

ՍՈՖԻԱ. Ազգային ժողովին առաջարկվեց
դաշնագիր փոխադրութեան մասին:

ԼՕՆԴՕՆ. Թագաւորը անցեալ գիշեր բաւա-
կան երկար քնեց: Բժիշկները այսօր առաւօտ
շատ գոհ են, սակայն առողջանալը այնքան
շուտ չի լինի: Թագաւորը շատ ուրախ է, կա-
րող է կարգի, հեռագրերի թուով մէկը
ստացված է բոլորներից, Բալթիկայից, ինչպէս
են Աստուծոց երկար պահպանել թագաւորի
եւ թագուհու կեանքը: Թագաւորը օրը լաւ
անցկացրեց: Կէսօրից յետոյ նա անկողնից տե-
ղափոխվեց բազիլիոնը:

ՎԱՐՇԱՎԱ. Երկարատեւ յորդառատ
տնտեսական յետոյ լեռներում գետերը վա-
րարվեցին: զինուորական-օսթիւնեան ճանապարհը
փչացած է. Թէրէքի ստորին հոսանքում գտնու-
վող պատնէշները չորս տեղերում քանդվել են:
ճանապարհները եւ խաղողի այգիները ողող-
ված են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Թագաւորը կայսրը այցելեց
Ֆրանսիական կրթական «Dugue Frouin» նաւը,
իսկ յետոյ 2-րդ կադրի «Նուիկ» կրէյսերը, որ
ինված է Գերմանիայում:

17 յունիսի

ՆԻԿՈՒՍԵՎ. Ժամանեց սեփական «Թամար»
գրասանաւով Մեծ Իշխան Ալեքսանդր Միխայ-
լովիչ եւ բարեհաճեց աղ ու հաց ընդունել քա-
ղաքացիներից:

ՎԱՐՇԱՎԱ. Մի շարք խորհրդակցութիւններ
գերմանական երկաթուղիների եւ Կալիշի եր-
կաթուղու ներկայացուցիչների միջեւ միացման
վերաբերմամբ վերջնական հետեւանքի չը հասց-
րին: Նիստերի արձանագրութիւնները ուղարկ-
ված են Պետերբուրգ՝ հարցը զիպոմատիական
ճանապարհով լուծելու համար:

ՄՕՍԿՎԱ. Յունիսի 16-ին մեծ հրդեհ բռն-
վեց ս. Նիկոլայ Հրաշագործ եկեղեցում Ստոր-
պիտու Այրվեցին շատ պատկերներ:

ԼՕՆԴՕՆ. Կրանքորն հաղորդեց համայնքների
ժողովին Պէկինի ուսանող զեւպանի յայտարա-
րութիւնը, թէ նա չէ կարող մասնակցել Տեանց-
դինը մաքրելու առթիւ Չինաստանին արած
պահանջների պայմաններին, որոնց ինքը հա-
ւանութիւն չէ կարող տալ: Անգլիական զեւ-
պանին յանձնարարված է նրանցից մի քանիսը
վերադնել տալ:

Կ. ՊՈԼԻՍ. Ժամանեց ինչպիսի
ԼՕՆԴՕՆ. Թագաւորի ոյժերը շարունակում
են լաւ լինել: Նա իրան աւելի ամուր է զգում:
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Новое Время» լրագրերը հա-
զարդում է, որ յունիսի 16-ին վարչական եր-
կաթուղու 166-րդ վերատի վրա խորտակվեց №
24 մարդատար գնացքը. սպանեց հնոցապան
Լանգսիլի եւ ճանապարհորդ Դանէնբերգ. ծանր
կերպով վիրաւորվեց գլուխը Էֆրիմով, թեթեւ
կերպով վիրաւորվեցին հաղորդակցութեան ճա-
նապարհների ինտերտուտի ուսանող Վերնէր եւ
զինագետ Մամչիշի աղջիկը:

ՅԵՐԱՅԵՐ՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱՆԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱՅՈՒՀԻ ՏԻՖԼԻՍԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Կամենայով յարգելի ընթերցող հայ հասարա-
կութեան առաջարկել քաղաքաւորէն մի թարգ-
մանութիւն՝ պետական բոլոր օրինագրքերից,
սկսած առաջին հատորից մինչեւ 16-ը, որոնք
վերաբերում են սոսկ հայ լուսաւորչական ե-
կեղեցու անտեսական եւ վարչական մասերի
կառավարութիւններին, թարգմանութեան մէջ
զիջաւոր տեղ է բռնում նաեւ հայոց պօսժե-
նէին, վերջին 1896 թ-ի հրատարակութիւն:
(Томъ XI, ч. I. Уставъ духовныхъ дѣлъ
иностранныхъ исповѣданій), այդ պատճա-
ռով յայտնելով ի գիտութիւն հասարակու-
թեան, պարտք եմ համարում ասել, որ արդէն
սկսել եմ աշխատութիւնս եւ մօտ եմ աւար-
տելուն: Եթէ գտնվի մէկը, որ կարողանար այդ
առթիւ կարեւոր տեղեկութիւն տալ՝ գործին
լոյս սփռելու եւ օժանդակ լինելու մտքով,
թող բարեհաճէ հորհր անել՝ գրել ինձ այդ մա-
սին:

Գարտուղար հոգեւոր կառավարութեան
հայոց Ալեքսանդր Կոչար՝ Աղէքսանդր Սանդիկանց
1—2

Բաւենի Բաշ-գիւղում կազմվել է ժողովրդա-
կան ընթերցանութեան համար չրջիկ գրադա-
րան, որի համար ժողովել եւ ժողովում եմ
ընթերցանութեան գրքեր, թէ Բաշ-գիւղի եւ
թէ Բաւենի չրջակայ գիւղերի համար, որի
համար ինչպիսի եմ յարգելի թարգմանիչներին
եւ հեղինակներին՝ չը զանալ մի-մի օրինակ
նուիրել իրանց աշխատութիւններից մեր չքա-
ւոր եկեղեցու ընթերցարանին: Գրքերը կարելի
է ուղարկել՝ черезъ Каракуртъ, сел. Башкей
Карск. обл. священнику Габриелу Тур-
палциъ.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Սրանով պատիւ ունեմ հաղորդել մեզ հետ
գործ ունեցող յարգելի պարոններին, որ Աղա-
տաֆա երկաթուղու կայարանում գործերը դա-
դարելու պատճառով փակվում է մեր յանձնա-
րարական գրասենեակը ներկայ տարվայ յուլիսի
1-ից: Փոխադրելով նոյն գրասենեակը Երեւան,
ինչպէս եմ գիտել մեզ այնտեղ հարկաւոր
դէպքում:

8—10 Պողոս Գ. Պողոսեանց

ՍՐԱՆՈՎ ՊԱՏԻՒ ՈՒՆԵՄ ՅԱՅՏԱՐԱՐՆԵՐ

որ երկաթուղու Աղաւտաֆա կայարանում գոր-
ծերի դադարելու պատճառով, ներկայ յունիսի
ամսի 20-ից յանձնարարական գրասենեակն փա-
կելով՝ փոխադրում եմ Թիֆլիս, ուստի ինձ
հետ գործ ունեցող ցանկացողները թող բարե-
հաճեն զինել հետեւեալ հասցեով:

3-я Гончарная ул., № 20, собств. домъ.
4—4 Մկրտիչ Գաբրիէլեանց

Դ Օ Կ Տ Օ Ր

ՎԱՅԱՆ ԵՐԾՐՈՒՆԻ

այս ամառ եւս ընդունում է հիւանդներին
հանրային ջրերում (Պետտիգորսկ):

Пятигорскъ, Вѣрхн. 6. д. Султанъ Крымъ-
Гирея. 10—10

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վ ա ճ ա ռ Վ ու ռ ե ն՝
ՌՈՒՄԱՆԵԱՆ Իշխ. Մ. հրատ., Պատկերազարդ այրուբէն, ուղղած, փայտէ քառակուսիներով
(կուրիկներով). Թիֆլ. 1902 թ. գ. 1 ր. 50 կ.:
ԼԷՕ, Յովսէփի կաթողիկոս Արղունեան, 4 պատկերով, Թիֆլ. 1902 թ. գ. 60 կ.:
ՎԷՐԵՐ Միս. Դր., Արարատը Սուրբ Գրոց մէջ, Վիեննա, 1901 թ. գ. 50 կ.:
ՔԱՅՈՒՀԻ Չ. Մ., Կաթնաւանդութիւն, նկարներով, Վիեննա 1901 թ. գ. 75 կ.:
ՅԻՆԿ Ն. Յ. պրոֆ., Նեղոսի Դորասպատոյ Կարգադրութիւն պատրիարքական աթոռոյն, հայկ.
րէն եւ յունարէն, մարտի տիպ, Վաղարշապատ, 1902 թ. գ. 1 ր.:
ՌՈՒՄԱՆԵԱՆ Իշխ. Մ., Պատկերազարդ շարժական այրուբէն 5 ձեռք մի տուփի մէջ 1 ր.
ԷՓՐԻԿԵԱՆ, Գրպանի առաջ, գ. 1 ր. 75 կ.:
Ե. ԼԵՂՈՒԼԷ, քաղաքաւորութիւն զինանոց, գ. 1 ր. 20 կ.:
Դիմիլ. Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (Ե.) 1—5

Շ Ղ Թ Ա Յ

Նաւթաղիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը հրաւիրում է Ընկերութեան պ. պ.
բաժնետէրերին արտակարգ ընդհանուր ժողովի, որը տեղի է ունենալու Երեքարթի օր, յունի-
սի 18-ին, ուղիղ 8 ժամին երեկոյեան, Գործընթացի այրում, Միջալէկեան պրոսպեկտ, № 143:
Զբաղմունքի առարկաներն են.
1) Վարչութեան հինգ անգամի ընտրութիւնը:
2) Վերադննդ յանձնաժողովի 3 անդամի եւ նրանց երկու տեղապահների ընտրութիւնը:
3) Ընկերութեան գործունէութեան յետագայ ժամանակի հրահանգի որոշումը:
Յայտարարվում է նոյնպէս,
որ Վարչութիւնը նշանակել է 5/10 վճար, այսինքն իւրաքանչիւր փային 5 րուբլի ներկայ
յունիսի 19-ից մինչեւ 28-ը ներփակված եւ յունիսի 29-ից մինչեւ յուլիսի 8-ը տուգանքով
համաձայն ընկերութեան պայմանագրի 7-րդ յօդուածի:
Վճարի ժամանակ պէտք է ներկայացնել անպատճառ բաժնետոմսերը:
(12, 15 եւ 18 յ.) 3—3

Ալեքսանդր Կոչարի Եօթնասարանեան Առեւտրական Դպրոցի Հոգա-
բարձական Խորհուրդը

յայտարարում է, որ այդ դպրոցը կը բացվի այս 1902 թ-ի աշնանը, որ ենթադրվում է բանա-
պատրաստական, առաջին եւ երկրորդ (եթէ բաւականաչափ ցանկացողներ լինեն—եւ երրորդ)
դաստանները, որ ընդունելութեան խնդիրները պէտք է տրվեն վերատեսչի անունով ար-
տարվայ օգոստոսի 1-ից մինչեւ 20-ը, որ խնդիրների հետ պէտք է ներկայացնեն կոչման, ծը-
նընդհան եւ ծաղկի պատուաստման վկայականներ իրանց պատճեններով, հասարակ թղթի
վրա, իսկ այլ դպրոցներից փոխադրվողները, բացի այդ, եւ ուսման ու վարձի վկայականներ
այն դպրոցներից, որոնցից դուրս են գալիս: 2—3

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ւ
Լ է Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում
Հ Ա Տ Ո Ր Ե Կ Բ Ր Ո Ր Դ
XVIII ԴԱՐ
Ա ա ջ ր ի ն մ ա
ԳԻՆԸ 1 ԲՈՒՐԼԻ 50 ԿՕՊԷԿ
Մակում է. հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը՝ Վասցէն Թիֆլիս, Редакция Мшакъ.
«Գիտաստեղծ» գրապատասխանողում՝ Վասցէն Թիֆլիս, Книжный магазинъ „Гуттенбергъ“.
Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինակնե-
րը: Գինը 1 րուբլի 50 կօպէկ:

КЪ СВѢДѢНІЮ

Ванильный сахаръ представляетъ собою готово
растертую съ сахаромъ ваниль и содержитъ каж-
дой трубочки ванильного сахара соотвѣтствующее
дѣйствию чѣлоу палочки ванили.

ФАБРИКА Т-ВА

„Р. Келеръ и К^о въ Москвѣ“

ПРОДАЖА ВЕЗДѢ ВЪ ЛУЧШИХЪ МАГАЗИНАХЪ.

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳԻ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

Վաճառվում են հետեւեալ թատրոնական պիէսները՝
ՇՁԵԳԼՈՎ, Դօկտոր Թաթոս, կառակ-փողովի 1 արար. Թարգմ. Աղաւ Սարգսեանի, գ. 20 կ.
ՊԱՐՈՆԵԱՆ Յ., Արեւելեան առամիարոյժ, կատակերգ. 5 արարուածով, գ. 50 կ.
ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ Դ., Պէպօ, կօմէդիա 3 արար., բ. տիպ. ուղղված, գ. 50 կ.
» Օսկար Կետրովին էն կինը, կատակերգութիւն 1 արար., գ. 30 կ.
» Գիշերական սարը խէր է, կատակերգ. 1 արար., բ. տիպ. ուղղված, գ. 30 կ.
» Ամուսիններ, կօմէդիա 5 արար., բ. տիպ. ուղղված, գ. 1 ր.
» Խաթաւալա, կօմէդիա 4 արարուածով, գ. 50 կ.
» Գանաձ օջախ, կօմէդիա 3 արար., Թիֆլիս, գ. 50 կ.
ՍԱՐԴԱՐԵԱՆ Աղաւ, Օրթաւալու քէֆ, կամ Չքու ըան է, ֆարս-փողովի, 1 արար., գ. 20 կ.
ՍՏԵՓԱՆԷ Խորէն կախիկաւոր թարգմ. ֆրանս. «Տարտիֆ» Օրթիէրի կատակերգ., գ. 50 կ.
ՍՈՒՆԷ Կալիսենց, Լաքաթա, ֆարս-փողովի 1 արար., գ. 25 կ.
ՍՈՒՆԵԱՆ Յովակ., Դոնադուդո մնաց, փողովի 1 արար., Մօսկվա, գ. 20 կ.
ԲՕԶՕ Ա., Մկնիկը, փողովի 1 արար., գ. 20 կ.
ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ Էմիլ, Սէր կամ մահ, երգ պիէս 1 արար., բ. տիպ., գ. 50 կ.
» Կուսպատճառ ես էի, կօմէդիա փողովի 2 գործ., բ. տիպ., գ. 50 կ.
» Մօղա, կօմէդիա 1 արար., բ. տիպ., գ. 50 կ.
» Խէյօ թուղը, ֆարս-փողովի 1 արար., բ. տիպ., գ. 50 կ.
» Զարը, կատերգ. 1 արար., գ. 1 ր.
» Բարեգործութեան զինակի տակ, դրամա 5 գործ., գ. 1 ր.
» Էլ չարս ինչ կամ երկու սիրահար, կատակերգ. 1 արար., գ. 50 կ.
» Էյպրենի, կատակերգ. 1 գործ., գ. 50 կ.
» Դանդիկան սուր, դրամա 3 արար., բ. տիպ., գ. 75 կ.
ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ Մ., Վոյ բի իմ վէշեր, ֆարս 3 պատկերով, գ. 40 կ.
» Պառաւերուն խրատ, փողովի 1 արար., գ. 50 կ.
» Ով է մեղաւոր, կատակերգ. գ. գործ., գ. 30 կ.
Դիմիլ. Тифлисъ. Книжный магазинъ „ГУТТЕНБЕРГЪ“. Г. Галустану, Лорисъ-
Меликовская ул. № 11. 3—3